ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ ԳԻՐԸ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՀՈՎՆԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐՏԵՐՅԱՆԻՆ՝ ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՔՍԱՆ ԵՎ ԿԱՆԱԴԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅԱՆ ՏԱՄՆԱՄՅԱԿՆԵՐԻ ԱՌԻԹՈՎ

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՎԱՍՏԱԿԵԱԼ ՍՊԱՍԱՒՈՐՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ, ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՅՈՎՆԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԷՐՏԷՐԵԱՆ, ՈՐ Ի ՄՈՆՐԷԱԼ, ԿԱՆԱԴԱ

Համայն հայութեան Սրբութիւն Սրբոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ու սրտաբուխ շնորհաւորանքներն ենք յղում Ձեզ՝ Մայր Եկեղեցու անդաստանում Ձեր նուիրեալ սպասաւորութեան 20 եւ կանադահայոց փիրախնամ թեմի առաջնորդութեան 10-ամեայ զոյգ յոբելեանների ուրախ առիթով:

Սիրելի Սրբազան. քահանայագործութեան եւ առաջնորդութեան Ձեր տարիները բազմարդիւն են ազգօգուտ ու եկեղեցաշէն գործերով, որոնք քաջակորով ու եռանդաշատ հոգեւորականի ճանաչում եւ բարի համբաւ են բերում Ձեզ:

Մենք բազում անգամներ Մեր բարձր գնահատանքն ենք յայտնել Ձեզ՝ Կանադայի հայոց թեմի առաջնորդի պարտականութեանց մէջ արձանագրած Ձեր յաջողութիւնների համար: Ծառայութեան հանդէպ Ձեր նուիրումի եւ նախանձախնդրութեան լաւագոյն վկայութիւն է այն իրողութիւնը, որ Կանադայում բնակութիւն հաստատած բարեպաշտ զաւակունք մեր Մայր Եկեղեցու երրորդ անգամ հաստատեցին իրենց անվերապահ վստահութիւնը Ձեզ՝ վերստին կոչելով առաջնորդական պատասխանատու պաշտօնին:

Սիրելի Սրբազան. Ձեր յոբելեանների բերկրալի առիթով Մեր սէրն ու Հայրական օրհնութիւնն ենք բերում Ձեզ եւ անկեղծ գոհունակութեամբ բարձրօրէն գնահատում նաեւ Հայաստանում քրիստոնէութիւնը պետական կրօն հռչակման 1700-ամեակի գրասենեակի վարիչ-տնօրէնի ծանր ու պատասխանատու պաշտօնը ստանձնելու եւ

ամենայն պատասխանատուութեամբ իրականացնելու համար: Ամիսներ յետոյ համայն մեր ժողովրդով Հայ Եկեղեցու դարակազմիկ յոբելեանը փօնախմբելու ենք մեծարժան վայելչութեամբ, որում գնահատելի ներդրում ունէք նաեւ Դուք՝ կազմակերպչական Ձեր կարողութիւններով ու անյոգնաբեկ աշխատանքով:

Մեր աղօթքն ու բարի մաղթանքն է, որ Ամենակալ Տէրը Իր հանապազ օրհնութեան եւ ողորմութեան ներքոյ քաջառողջ արեւշատութիւն ու բիւր բարիքներ պարգեւի Ձեզ, որպէսզի Դուք Ձեր հարուստ փորձառութեամբ ու հոգեւոր խանդավառութեամբ շարունակէք Ձեր անսակարկ սպասաւորութիւնը՝ ի պայծառութիւն Կանադահայոց փիրախնամ թեմի եւ Առաքելական մեր Մայր Եկեղեցու:

«Ծառայ բարի եւ հաւատարիմ ... մուտ յուրախութիւն Տեառն քոյ» (Մատթ. ԻԵ 21):

«Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ եւ ընդ ամենեսեանդ». ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Գիրս Օրհնութեան ի 31-ն Հոկտեմբերի
յամի Տեառն 2000 եւ ի թուին Հայոց ՌՆԽԹ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 126